ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ,
ՈՐՈՇՈՒՄ N 8-Ա

«19» մարտի 2020 թվական գյուղ Փանիկ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի նախադպրոցական ուցումնական հաստատության շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին <<Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի ներքին վերանորոգման առաջնահերթ խնդրով:
2. Հայտի հաստատման դեպքում կատարել 7 տոկոս ներդրում սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրի պահանջներին համապատասխան:
3. Ծրագրի իրականացման դեպքում վերանորոգված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջե:
4. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ներկայացնել համապատասխան հայտ՝ ծրագրին մասնակցելու վերաբերյալ:
5. Վերանորոգված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով՝ ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԳՈՒՐԳԵՆ ԱՐԵՎԻԿՅԱՆ՝ կողմ ----------

ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ ----------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ կողմ ----------

ՍԵՐՅՈԺԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ կողմ ----------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԳԵՎՈՐԳ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

<< 19 >> մարտի 2020 թվական
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ